

զկենդանութիւն. և թէ չեք հաւանութիւն, ուր ապա զպատուիրանապահութիւն՝ և ուր չեք պատուիրանապահութիւն զիամրդ հաշտութիւն ընդ աստուծոց և ընդ սրբոցն այցելութիւն. և ուր արդեօք զկեանք՝ եթէ ոչ յԱստուած. ըստ այնմ. «Ես եմ յարութիւն և կեանք,:: Եւ ուր զԱստուած՝ եթէ ոչ ի պատուիրանապահութեան. և ուր ըզ պատուիրանապահութիւն, եթէ ոչ ի հաւանութեան կամաց. և ուր այսոքի անդ ոչ երբէք պատուհաս. որպէս Մոդսէս նախանձախնդիր օրինացն, զպահեցողն օրինաց օրհնէր, պարգևեալ յոյն զպալիք զկենացն երկարութիւն. զանգոց և զերեց առաւելութիւն, և այլ ամենայն բարիք՝ առհաւատչեայն երկնից՝ ընծայէր նոցաւ Խսկ ոչ պահողացն զի՞նչ. քստմնելի վճիռ արդարեւ, սուր՝ մահ զերութիւն՝ սով՝ կարծութիւն կենաց, կտառորութեան որդւոց առաջի իւրեանց. այլ և ամենայն պատիժք առաքեալք առ նոսա: Տեսե՞ր զպահպանութեան օրինացն ըզ պատուղս. նկատե՞ցիք զոչ պահելոյն պահելոյն պատուհաս. ապա դարձուցեալ զկամն մեր՝ Հաւանեսցոնք պատուիրանին. և գտցուք զհողին շնորհաց՝ զմայրն ամենայն առաքինութեան. և զեւրաքանչեւք պարզեալն յԱստուծոյ զզդայտկան զօրութիւնն՝ ի բարեգործութիւնն, զերեակայութիւնն՝ յըմբոնութեան երախտեացն բարերարին. զմիշողութիւնն՝ ի միտ ածել զտնօրինական գործս Քրիստոսի. ըզմիտս՝ առ ի քննել զպատուիրանն նորա. զաչո՛ ի գլութիւն ընկերին. զեերանս ի միմիթարական բանս սգաւորաց. զւելիս՝ ի յուր բանիցն Քրիստոսի. զձեռս՝ յո-

զորմութիւն աղքատաց, ի կանգնումն  
անկելոց. որովք ապա կարողացուք և  
մեք գտանել զողորմութիւն ի սրբոց նա-  
րա՝ յաւուր նեղութեան և տառապա-  
նաց, ի փառս մարդացելոյն Աստուծոյ. և  
ի պատիւ սրբոցն նորա. յանկէտ յաւի-  
տեանս փառք:

Պ Ա Տ Ս Մ Ա Կ Ա Խ Ն

ՀԵՌԻԹԻՔՆՔ ՀԱՅԻՆԵԱՑ. ու այս  
մասնաւուց (ՆԵՐՆԵՒՄ-ԵՒՆ),

Ե Ա Հ Ա Գ Ի Ւ Ե Ա Վ Ե Յ :

Հայկերտին նախնի մեծութիւն, փար-  
թամութիւն և բարեպաշտութիւն հըռ-  
չակի հարկանողն այս եկեղեցին է «Ամե-  
նափրկիչ», անուամբ, ո՞կարող է առանց  
զարմացման տեսնել այսպիսի ընդարձակ  
մեծաղիր, և շքեղաշխն եկեղեցի մի. շե-  
նութիւն համակ սրբատաշ քարամբք  
տանիք եկեղեցւոյն և փոքրիկ կաթուղի-  
կէն վայելչաձե չորս փառաւոր և ամրա-  
պինտ սետնց վերայ հաստատուած են  
թաղակապ. ունի երեք սեղան, մինն մի-  
ջինն որ և աւագ, ընդարձակ և հյոյակապ,  
և երկուքն աջ ու ձախ կողմերն, երկու  
խորանների վերայ. սորա շինութեան թո-  
ւականն անյայտ է. գուցէ և փակուած  
լինէին ի ներքուստ, կաթուղիկէի բոլո-  
րակ պատուանդանին վերայ զրուած մե-  
ծատառ տողին մէջ. բայց դժբաղդաբար  
խոնաւութիւնէ եղծուած լինելով այն ըստ  
մեծի մասին, հնար չեղեւ զլի առնելու:  
Եկեղեցւոյ արեւմեսան զբան ճակտոնին  
դրուած փոքրիկ խաչքարի վերայ կայ զր-

ուած ։ «Թմ. ՈՒՃՇՎ շինեցին,, սակայն այս կամ խաչքարի շինութեան կամ տաճարի նորոգութեան թուականը պիտի լինի ըստ որում տաճարի հնութիւնը և քարերի արդէն մաշուած լինելը ցոյց կտան որ այդ թուականէն շատ յառաջ պիտի շինած լինի։ Եւ կեղեցւոյ պարստապատ զաւթին մէջ կան քանի մի գերեզմաններ գետնին հետ հաւասարք, և առանց արձանագրոց. միայն մէկի վերայ այս արձանագիրն էր, Այս է տապան խօճայ Յովհաննէսին, որ փոխեցաւ առ Քրիստոս թվին ՈՒՃՇՎ, գուցէ սա լինի Խանդամիրեան Յովհաննէս քաջ իշխանին գերեզմանն. որ թէ և գեղակուր եղեւ ։ Կախիջեանի մէջ, բայց հաւանական է կարծել որ մարմինն փոխադրուած լինի այս տեղ։ Կորա մահուան թուականի և այս արձանագրի մէջ հինգ տարի զանազանին միայն կարծիքի տակ կթողու։

## Ա. Յովհաննէս։

Գիւղի մէջ տեղը քարուկիր շինութեամբ եկեղեցի մի եղած է այժմ մնան միայն հարաւային կիսափուլ որմն և զուռնի իսկ այլ ամէն շինութիւն հեղեղի բաժին է եղած. որ փոքր առ փոքր իւր սովորական ձանապարհը թողով, և ընթացքը ուղղելով այս եկեղեցւոյ վերայ, սրբել է միանգամայն, որոյ սեղանոյ տեղըն այժմ ոււենիք սաղարթ արձակած են. յիշատակեալ դրան մէկ կողմի քարին վերայ միայն դտանք այս գրեթս «ՊԴ», գիւղացիք պատմեցին որ երեք տարի յառաջ վայրի ոչխար մի իւր ոտքովն եկաւ պարկեց այս եկեղեցւոյ դրան առաջին

իրրե մատաղ և իրանք մոլթեցին ու բաժանեցին բոլորի վերայ։

## Քարվանսարայ։

Հին շինուածոց մէջ տեղ կոփածոյ քարամբք և կրով կանգնած ամուր և նշանաւոր շէնք մի է, որոյ արևմտեան կողմի տանիքն այժմ վկած. ինչպէս այժմ երթեւեկ օտարականաց, նոյնպէս և ի հընուեմն մեծափարթամ կարաւանի հանգստարանն կամ իջեանն է եղած։ Այս կարաւանոցի չորս կողմն սփուած են ամայի կիսափուլ աւերակներն բնակարանաց տառապակիր նախնի Յահկերտցւոյ. բայց գոցա շատերն եւ հողի հետ հաւասարուելով այդիք են ձևացած։ Քարվանսարայի արևելակողմն իրրե երեսուն քայլ հեռի, կայ կանգնած վայելսաքանդակ բարձր խաչքար մի, որոյ եղերքին գրուած ։ Եւս Գրիգոր կանկնեցի խաչս զայս իմ հոգւոյս . . . . թվ Յ., բայց թէ ինչու համար կանգնեցրել են այս տեղ այս խաչքարն չիմացուեցաւ։

Բերդ Պաղանելոյ:

Հ. Միքայէլի յիշատակած բերդին է այս՝ ի թիկանց Յահկերտի, ուր ա հրացան ձեւտար խանի հարստահարութեան երեսէն աշարեկեալ Յահկերտցիք. այս բերդն՝ յիրաւի ինչպէս կզբէ նոյն պատմիչ «սրածայր» և անմատչելի լեռն է, որոյ վերայ կանգնած ամուր դղեակն ըստ նորուն,, կայր շինեալ ի վաղ ժամանակաց . . . . և էր այն տեղի ապաւինութեան քաղաքացւոց,, Պարիսպն՝ զոր

նախանձելի իշխանն Յովհաննէս կանգնել տուած է ապաստանեալ բազմութիւն ապահովելու համար, ցարդ ևս կպատէ կիսաւեր որմովք դղեկի ստորոտը, նոյնպէս կան և աւերակք աշտարակին, որ շնչած էին լեռան քովն, մօտավազ դետէն (Երնջակ) անմիաս և ապահով ջուր առնեռ համար: Եյս ամրոցիս վերայ Յովհաննէս իշխանն Խանդամիրեան իւր հինդ հարիւր զինակրներովն ։ Եյտար խանին Խախիջևանի—մարդախոշոշ բռնաւորի ահազին բազմութեանն և կատաղի սըրտմատութեանն երկար ժամանակ դէմ զրեց քաջաբար, առ ոչինչ համարելով նորա սպանալիքն և ստապատիր խոստմունքն, բայց երբ որ իւր փոքրաթիւ խմբի մէջ տեսաւ մտած երկպառակութիւնն, այն ժամանակ յուսակտուր և ճարահատ անձնատուր եղեւ ինքնին, և ։ Եյտարի չարամլտ հրաւիրանօքը ։ Խախիջևան գնալով, գեղ մահու ընդունեց և կնքեց իւր կեանքը, նորա հետ և այնքան ողորմելի գերդաստաններ զոհ գնացին անօրէն Պարսկի դառնութեանն: արտասուելի ծմարտութիւն է, որ բնութիւնը հայի բազուկը անգծելի զէնք հաստատեց, բայց զայն չգործածելու համար սիրտը անկերպարան հրէշ մի դրաւ—անմիարանութիւն, զայն ի ներքուստ միշտ կրծելու և թուլացնելու համար:

Եյս տեղ ցարդ ևս պանձանօք կը շատակին այս ամեն անցքերը բնակիչք տեղոյս, Խանդամիրեան Յովհաննէս իշխանն, դժբաղդ հայ զօրագլուխն կիրչեն ։ Խօջայ վանի,, և այն արիասիրտ աներկիւդ այրն Գրիգոր, որ յարձակելով մի- այնակ՝ աշտարակն պաշարող Պարսկաց

վերայ հալածեր է ի բաց, ինչպէս կզրէ ։ Միքայէլն (Հատ. դ. եր. 846) կանւանեն մականուամբ : Ուրու Գիրգոր,, կմնան ցարդ ևս և աւերակ տեղիք երկու այգեաց և տանց Խանդամիրեան իշխանի, որոնք բնակչաց մէջ կասուին ։ Խօջայ Վանու յիգին,, ։ Խօջայ Վանու տները,, :

### Ըստ—բէկի յոր

Ըստկերտի արևելակողմն է այս ձորը կպատմէ տեղական աւանդութիւնն, թէ նորա համար կոչուեցաւ ։ Ըստկեկի,, որ Վազանչեցի Խօջայ Գոստին ։ Ըստ Արբասին այս տեղ արքայավայել Ճոխ սեղան տալով հրաման առաւ շահէն որ և իցէ չնորհ ինդրելու. և ինդրեց թէ ինձ իրաւունք առւր այս տեղ գեղ շինեմ, և ի պատիւ ձեր անունն զնեմ ։ Ըստ գիրդ,, ի. և Ըստ հաւանելով առաջարկութեանն, կկատարէ հայցուածն երեկի թէ ասպատակութեանց գերութեանց և հարստահարութեանց պատճառաւ այս աւանն ժամանակաւ բոլորովին անմարդացել և ամայացել էր, մինչեւ որ Ըստաբասի հրամանաւ յիշատակեալ խօջայ Գոստին կրկին բնակութեամբ զարդարել է, ինչպէս աւանդութիւնն ցոյց կտայ. կամ գուցէ աւելի հին ժամանակի տալու փոխանակ, Ըստաբասի օրով կդնէ այսպիսի անցք մի, ապա թէ ոչ, Ըստկերտ անունն շատ հին է քան զԸստաբաս:

### Կամուրջ Ըստկերտի:

Գիրւղի առաջեաւը, Երնջակ դետի վերայ կանգնած կոփածոյ քարամբք և թաղակապ ամուր շնչուած կամուրջ մի է,

յիշատակ խօջայ Պօղոսի Պազանչեցւոյ. որոյ և յիշատակարանն կար արձանագրած ճակատին, բայց ջրոյ յարդութեան պատճռաւ չկարացի. մօտենալ ու կարդալ:

### Թէ՛յլա՞ն

Պազանչուն սահմանակից և իրը չորս վերստ հեռաւորութեամբ հօվտաձեւ դաշտակի մէջ շնուռած է այս գիւղն, երեխն, հայաբնակ. այժմունի իւր մէջ երեսուն տուն մահմետական բնակիչ. հայոց տների աւերակներն և գերեզմաններն կան գիւղեւ արևելակողմն. բլրակի վերայ, գերեզմաններն շատ հին են, ուստի և արձանագրութիւններն եղծուած ու մամապատճենելով չկարդացուեցան, միայն մեծ խաչքար մի կար կանգնած, որոյ ճահկատին դրուած. «թվես ՈՌՕԳՆ, և խաչե պատուանդանին»: «ի բարեխօսութիւն Պաւթի», միւսներն անվերծանելիք:

### Ե՛կեռչն Թէ՛յլա՞ն

Գիւղի մէջ տեղն միջակ մեծութեամբ և բարձրութեամբ փառաւոր և գեղեցիկ շնչք մի է, կոփածոյ քարերով կանգնած թաղակաղ, չորս սների վերայ. տանիքն երկու տեղ փլած. ամենեին չունէր արձանագիր, ունի մի սեղան և երկու աւանդատուն. ձախակողման դասու սեան մօտը գերեզման մի կայ, որոյ կոփածոյ մահարձանը չունէր գիր:

### Ա Ե Ր Ե ն ա ն պ լ ա ր. (Բառ Ա ն պ լ ա ր)

Թէ՛յլազին սահմանակից՝ դարաւանդա վերայ շնուռած դայս գիւղ մի է, բնա-

կութիւն 40 տուն մահմետականաց. իսկ ի հնում բազմամարդ աւան չայոց, որոց քարաշն շնուռածոց կան և կմնան աւերակներն. անունս «Վնզուր հայացի»: «Վնզուր հայացի» բազմամարդ ինչպէս այս, նոյնպէս և երկու համանուն զիւղերի ընկցենեաց բազմութենէն, որ աղաւազուելով տաճկական շրթանց մէջ դարձել է «Վնզուր»:

### Ե՛կեռչն Գեղջն

Քարաշն վայելչակերտ, և փոքր դրութեամբ փառաւոր եկեղեցի է. չորս կիսասեանց վերայ թաղերով հաստատուած, ունի սեղան մի, և երկու աւանդատուն և գուռն մի արևելտեան. տանիք եկեղեցւոյն միանգամայն խոնարհած է: Գրան արտաքին ճակատաքարի վերայ գրուած է: «Հիմնարկեցաւ ի թուականիս ԱՌ' Կ' առաջնորդութեամբ մերս Տեառն ԱՌ' թէոսի արհի եպիսկոպոսի: Վրեմտակողմն գիւղին է ընդարձակ գերեզմանատուն և այս հին ժամանակի:

### ՄԵ՛ՀԵՆ ԵՆ ՊԼԱՐ (ՕՐԵԱՅ—ԵՆՊՈՐ)

Ա երնոյն սահմանակից՝ ձորակի ի մէջ կանկանի այս գիւղ, հնում հայաբնակ, իսկ այժմ տասն տուն մահմետականաց պատսպարան. հայ շնուռածոց կիսակործան աւերակներն կան միայն:

### Ե՛կեռչն Գեղջն:

Գիւղի արևելտակողմն բարձրաւանդակի վերայ շնուռած է այս եկեղեցի անշուք, մեծութեամբ. այժմ չորս որմունքն կան. հարաւակողմն՝ եկեղեց-

ոյս պարապի տակ է գերեզմանատունն հայոց, որոց արձանագրերէն վեր առինք միայն հետեւալքս.

“Եյս է Տապան Անիկին ակրտէրի թռ. ԱՌԴԻՒԶԻՆ.,

“Եյս է Տապան Մաթոսին թռին ԱՌԴԻ.,

Է և միւս գերեզմանատուն հայոց բաւական մեծատարած, եկեղեցւոյ արեւելակողմն, ճանապարհի ձախ թեփի վերսոց, միայն հնութեան երեսէն արձանագրերն բոլորն եղծուած:

“ԵԵՐԵՒՆ ԱՆԱՊ-Ի (Գիշ ԱՆԱՊ-Ի)

Չորի մէջ ընկած քառասուն տուն մահմասական բնակիչ ունեցող գիւղ մի է, ի հնումն փարթամ և բազմամարդ աւան հայոց, ինչպէս ցոյց են տալիս նախկին հոյակերտ կիսուեր շինուածոց մնացորդքն, և ընդարձակ գերեզմանատունն. բոլոր շինութիւնքն փառաւոր, մեծամեծ բարձր, և քարաշէն:

ԵԵՐԵՎԵՐ ՀԵՂՋԱ,

Վարուկիր թաղակապ. և հոյաշէն շենութիւն է, չորս սեամնց վերայ հաստատուած, այժմ տանեաց կէսն և որմոց շատ տեղերն խոնարհեալ:

Գիւղին մէջ տեղը ձգուած ձիթահանի քար մի տեսի: որոյ տափակ երեսին վերայ դրուած էր ԱՌՅԱ սրանոցն ԱԼՔ-սանի որդւոյն (քանի մի գիրն անվերծանելի) թվին ԱՌԴ'Օ: գերեզմանատունն տիսուր զգացմամբ շքջելէն յետոյ հետեւեալ արձանագիրս միայն առնել հարկ համարեցի, որը են.

“Եյս է տապան Կաւասարդի որդի Ասատուրին. թվին ԱՅ.,

“Եյս է տապան Օռատուրին, որ հանձ գեաւ առ Վրիստոս թվին ԱՅ.Դ.Դ.,

“Թվին ԱՌԴ'Օ այս է տապան նուաստ Խղզաթին որ փոխեցաւ առ Վրիստոս,,

“Եյս է տապան նուաստ Արդտին թվին ԱՌԴ'Օ:

“Տապանս Վարդիկին թվ. ԱՌԴ'Օ ԴԱ  
Եյս թուականների վերայ ուշ դարձնելով կտեսնենք որ շատ ժամանակ չէ անցած զիւղիս հայ բնակչաց ջնջուելը, և տաճկաբնակ լինելը. բայց թէ որսկիսի առթիւ և ճակատագրով, դժուարին է զիտել. գերեզմանոցի արեւելակողմն ճանապարհի ներքել երկար ու կարգաւ ձըգուած կամ մնացորդք աւելակաց փոքրացիր շինութեանց, և կերեի որ եղած լինին ժամանակին կրպակներ: Կան նուեայգեաց նշմարելի ցանկեր: և ամէնքն ի հարկէ ցոյց կտան զիւղի երբեմնին մեծութիւնը, փարթամութիւնը, և բնակչաց աշխատասիրութիւնն:

Ը ՅՈՒՆԻ.

Առվտաձե դաշտակի մի վերայ կանկանի այս զիւղը, երբեմն նշանաւոր ծաղկեալ և փարթամ աւանն Հայոց. աւանգութիւն տեղացի ծերոցն կասէ՝ որ հընումն քառասուն չորս զլեաւոր վաճառականք կային (խօճայք) որոց տուրեառն էր Պօլսոյ և այլ նշանաւոր տեղեաց հետ Գիւղիս բազմաթիւ հոյակապ և մեծածախս հին շինութիւններն տեսնողն, յիրաւի կարդաբայնէ աւանդութիւնն. շըքեղակառոյց եկեղեցիքն և Մենաստաններն, փառաւոր և հոյաշէն տներն, և սենեակներն (զերպամիրի) աղբիւրներն, ջրբամբարներն և զիւղի հարաւակողմն ցան

և յիր սփռած պէսպէս շինուածոց մնացորդներն, կվկային բնակչաց երբեմնին բազմամարդութեանն, ճոխութեանն և յառաջաղիմութեանն:

Եյժմութնակիչք տեղւոյս ենքսանհինդ տուն հայ և եօթն տուն թուրք, որք կը պարապին երկրագործութեամբ, այգեգործութեամբ տաւարատածութեամբ, ու մանքնա և մեղուաբուծութեամբ և շերամատածութեամբ:

### Ո: Յակով Եկեղեցի.

Գիւղին մէջ տեղ փառաւոր, հրաշակերտ և հցակապ եկեղեցի է, համակ կոփածոյ քարերով ներքուստ և արտաքուստ, երկայնութիւն շինութեանն արտաքուստ քսան ութը քայլ, և լայնութիւնն տասն ութն. սագալանջ տանիք եկեղեցւոյն և աղիւսակերտ վայելաձեկաթուղիկին հաստատուած են չորս մեծամեծ չքնաղաշէն սեանց, վերայ ունի ընդարձակ բեմ և սեղան, և երկու աւանդատուն, ձախակողմեան աւանդատան ձակատին բարձր գրուած մարմարեայ քարին վերայ գրուած է՝ “Թվին Ո՞Դ Ռ շինցաւ սուրբ Յակովը: Թվին Ո՞Դ Ռ կանգնեցաւ խաչ յիշատակ Փշրկանց Խօճայ Մարգարին կողակցացն Կաղու խանին և մարդարիտն, որդիքն Սահակն, Օաքարէն, Առոքիասն և միւս մերձաւորք նոցա,, Աեղանոյ աջակողմեան կիսասեան ձակատի փոքրիկ մարմարեայ քարին վերայ բոլորակ գրեալ “Տէր Առտուած, Յիսուս Քրիստոս, օրհնեցաւ սուրբ սեղանս ձեռամբ ամէն . . . . թվին Ո՞Դ Ռ յիշատակ Ծօռօթայ հասարակութեան,, բաց աստի յաջակողմեան խորանի ձակա-

տին կային ևս երկու մարմարեայ քարինք, բայց դիր չկարացինք նշմարել. արձանագիր մի ևս երկտող՝ մնաց անվերծանելի եկեղեցւոյ հարաւային երկրորդ սեան կամարի վերայ բարձրութեան պատճառաւ: Կաթուղիկէի արաւաքին գօտուոյ վերայ շրջապատ տող մի գրուած էր խոշորագիր այսպէս “Հնորհօքն Աստուծոյ շինցաւ Կաթուղիկէս եկեղեցւոյս ի հայրապետութեան Տեառն Ազէքսանդրի և առաջնորդութեան սուրբ Կարապետին Ոիմչօն վարդապետի. արդեամբ Ծօռօթայ իշխանաց Աամուելին. Եյվաղին, (եղծեալ քանի միբառն) թվ. Ո՞Դ Ռ ունի տաճարն երեք դուռն. արեւմտեանն փառաւոր, մեծ, և զեղաքանդակ, գործարտարուեստ մատին, առաջեաւ դրանս եղած է նոյնպէս մեծ վայելուչ գաւիթ չորս սեանց վերայ թաղով հաստատիւած, որ յամի 1841 կործանուելով (ինչպէս և կաթուղիկէի հիւսիսային դագաթը) երկրաշարմէն վլատակի տակն առած է մօտակայ տան մի բնակիչ հինգաննձինք, այժմ կան միայն չորս կամարի հիմունքն. Եյս գաւթիս մէջ եղած են մինչև տասնի չափ խաչքարինք, որոց մի քանին գեղաքանդակ, և կդանուեին այժմ եկեղեցւոյ մէջ. երկուքի արձանագիրն առինք ի գիր, մինն այս “սուրբ խաչ կանգնեցաւ ի թվիս Զ.Խ. Հոգւոյ փրկութեան Աղաղարին և իւր կողակցին Կոուշեկին և իւր ծնողացն Խութլի բէկին Օաքարին Հուռումսին Մեսիրին,, միւսըն՝ “սուրբ խսչ յիշատակէ Եմբրին ծնողաց Մարիամին որդւոյն Ազիդ բէկին Էսպահանայ թօ, Ո՞Դ Ռ,, շուրջ եկեղեցեաւս է պարիսպ քարաշէն, տաճարի

հարաւակողմն եղած են աղիւսակերտ  
թաղաշեն վայելքաձեւ սենեակք, որոնք  
այժմ աւեր են:

### Առ-ը Կայ Եկեղեցն.

Ա. Յակոբայ յարաւակողմն է այս աւերեալ եկեղեցին որ եղած է բաւական մեծ և շքեղ. այժմ կաեսնուին միայն արեւմըտեան և հարաւային որմունքն քարաշեն և չորս սների ու սեղանոյ հիմունքն. ունեցել է և գաւիթ փառաւոր երկու սների վերայ հաստատուած, որոց միոյն դեռ կէսն կանգուն միւսն մինչև հիմն խոնարհեալ. հարաւային զրամն ճակատաքարի ներքին երեսի վերայ զրուած էր «թուականի Ո-կի» սուրբ խաչ յիշատակ է Ալուր բէկին որդւոյն Այբապետին.,

### Ա. Առաջածածնի անապատ Կո-սահաց.

Գիւղի հիւսիսակողմն կէս վերստ հեռի կանկանի այս անապատս, որ միջակ մեծութեամբ, քարուկիր և կամարակապ շինուած մի է. աւանդութիւնն տեղական ծերոցն կասէ որ քառասուն կուսանք կային այս տեղ. այս անապատիս մշջն է գրուել Վարդարիտ կուսի ձեռամբ յամի . . . այն աւետարանն, որ կայ Ա. Եջմիածնի գրադարանի մէջ: Տաճարն ունի մի սեղան և երկու խորան բեմ սեղանոյն կապուած է բոլորն գեղաքանդակ խաչ քարերով: և ամէնքն ևս ունին արձանագիր. միայն աջակողմեան ծայրի առաջին երկուքն թուական ունիլով արժան համարուեցան օրինակելու. առաջինն է այս «խաչ յիշատակ է Խաթունին թվին Ո-Շ-Դ-Ի,, երկրորդն «սուրբ խաչ յիշատակ է Փր.

. . . . Վաթոսին, և մայրն Առոմսին,  
Վարիամին տոռն սորա Օվանէսն որ փոխեցաւ առ Քըրիստոս թվին Ո-Շ-Դ-Ի,,  
Ունի տաճարս մի դուռն միայն — արևմտեան որոյ աջակողմն կապտագոյն խաչքարի վերայ զրուած է. «սուրբ խաչ  
կնկ հոգւոյ փրկութեան Վ-ն յօրին մըդ-  
րին Ո-Շ-Թվին,, սորա ձախակողմն է մեծ  
և գեղաքանդակ խաչքար մի, որ ունի  
զրուածս «սուրբ խաչ յիշատակ է Վ-Շ-  
Դնս քաշանայի սկիզբն և շնորհ սուրբ  
Եստուածածնիս և քեռ իւրոյ Վարիա-  
մին մաւր ուխտիս, և միւս քեռ Խղիսա-  
րիթին: Ճնողացն Առվլթան բէկին Մի-  
հրապանին թռ. թռ. և Ճ, դրան. ձախա-  
կողմն կապտագոյն խաչքարի վերայ  
«Մ-ըրին թռմօ Մխթրին,, թուականն եղ-  
ծեալ. սորա ձախակողմն գալքածեալ գեղա-  
քանդակ խաչքար մի, որոյ վերայ զրուած  
«սուրբ խաչ յշտի է Յ-նս ք-հ-նի հողա-  
բարձու և վերստին նոր գ-դ սուրբ ուխ-  
տիս. և Ճնողացն Գրիգորին և Օօրիկն  
կողակիցն Ո-ղվմին որդ, Մ-ըրըին եղքար-  
ցըն թռաթուն Ա-յկլ,, միւսն եղծեալ:  
Գրան առաջեաւ եղած է աղիւսակերտ  
կամարակապ գաւիթ երեք սեանց վերայ,  
այժմ կործան. գաւթի հարաւային սեան  
տակն է գերեզման խօջայ Խառումին, որ  
խեղդամահ եղած է անապատիս կրօնա-  
ւորելոյ անարգանաց վրէմին առնելու հա-  
մար\*) Վենաստանիս չորս կողմն եղած

(\*) Աւանդութիւն բնակչոյն կասէ որ տեղւոյս  
1500 տոռն բնակիներէն երեք հարիւրն մահմետա-  
կան էին. դոցա մոլլոյն կախարդական բժժանք յին-  
քըն ձգելով անապատիս կրօնաւորեալ կուսան-

են քարաշէն սենեւակներ մանաւանդ հարաւակողմն, որն բնակարան կրօնաւորելոցն և որն զանազան պիտոյից համար, հարաւային պարսպի տակն է և այդին վանուց, որ մինչև հիմայ ևս սանապատի բաղ, կասուի. որոյ մէջն է ընկուզենի մի սամարգարտի ծառ, կոչեցեալ յանուն կուսի որստին հիւսիսային պարսպի տակն է գերեզմանոցն կուսանաց ուր կան յիսնաշափ գերեզմանք, որոց երկուքի արձանագլերն զրի առի, որք են ։ Եյս է տապան Փանիկէի դուստր Անումէին փոխեցաւ առ Վրիստոս թըվով ՈՒՃ'ՕՒ:, ։ Եյս է տապան Պետրոսի դուստր Առաթին փոխեցաւ առ Վրիստոս Խ. ՈՒՃ'ՕՒ:

(ԵՐԵՎԱՆԻՑԵԼ):

Թէ ԻՆՉՊԻՍ ԿԱԶՄՈՒԵՑԱՌ ՀԱՅՈՑ ԱԶԳԸ

(Զ. ԲԱ-ԴԱ ՋԱԿԱՐԴ):

5) Մեր ազգի մէջ մասն և խառնուեցան նաև բազմաթիւ Յոյներ: Ինչ որ վերը ասացինք Պարսիկների մասին, նոյնը հարկաւոր է կրկնել և Յոյների մասին,—

Ներէն երկու դեռափթիթ չքնաղ աղջեկներ, երկու տարւոյ չափ գաղտարար կպահէ զերենք իւր տան մէջ. յայտնի լինելէն յետոյ խօճայ Խառումն զիւղի միւս Խօճաների հետ վրէժինդրութեան հնար մոտածեուլ, զիշերուան մի մէջ տաճկաց մղկիթն այնպէս կործանել և յատակել կտայ, որ նշանն անգամ չերեկի. ձայնն Խախիջեւանի Զանդ Քեարիմ խանին հասնելով կհրամայէ խեղդել խառումը, Գիւղի հիւսիսակողմն կան ցարդ ևս խօճայ Խառումի աւերակ տնելն. զեռ անվասաւ:

թէպէտ մեր պատմազիրները և մանաւանդ Մովսէս Խորենացին չեն յիշում մի առանձին դիպուած որ Յոյները մեծ բազմութիւնով գաղթած լինէին ։ այսոց երկիրը, բայց ի նկատի ունենալով ։ այսոց և Յունաց մէջ եղած սերտ յարաբերութիւնները, որոնք երբեմն բարեկամական էին և երբեմն թշնամական, այլ և այն որ շատ անդամ և ։ այերին յաջողումէք յաղթել Յոյներին և բազմաթիւ գերիներ խլել նոցանից, մենք համարձակորէն կարողենք ենթադրել, որ արդարե շատ Յոյներ մասն մեր ազգի մէջ և խառնուեցան ժողովրդի հետ: Պակաս չէ և վկայութիւնը նոյն իսկ Յունաց պատմագիրների մէջ: Զամշեանը՝ քաղելով Ատրաբոնից, Մեմնոնից, Պլուտարքից, Սպավիանից ևն. հաղորդումէ մեզթէ ։ Տիգրան երկրորդը, աւարտելով պատերազմը Պաղեստինու հետ, յարձակուեցաւ Կապադովիայի վերայ, տիրեց բոլոր երկրին և 30000 մարդ գերի առնելով ուղարկեց նոցա ։ այստան: Աւերեց նա նմանապէս Յունաց տասնեւերկու քաղաքը և նոցարնակիշները, որպէս է Մաժակ քաղաքի (յետոյ Աեսարիա) բնակիչները տարաւ և բնակեցրեց Տիգրանակերտում (իւր շինածնոր քաղաք) ևուրիշտեղերում, ։ Յովսէս Խիգրանի պատերազմը Յոյների հետ և նորա յաջողակ յաղթութիւնները, բայց ըստ իւր համառօտութեան մանրամասնաբար չէ որոշում թէ տանուեցա՞ն արդեօք գերիներ և թէ որքան էին նոքա ։ այսով կերիներ և թէ որքան էին նոքա ։)

(43) Զամշ. պատ. հատ. Ա. եր. 226.

(46) Մով. Խոր. զերք Բ. եր. 88.